

Կ Ա Ր Գ

ՀՀ էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսատնտեսական տեղեկատվությունների ընդունման, քննարկման և վերլուծության կազմակերպման

Սույն կարգը սահմանում է էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով) ներկայացված ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսատնտեսական տեղեկատվությունների և հաշվեկշիռների (այսուհետև՝ հաշվետվություններ) ընդունման, քննարկման և վերլուծության ընթացակարգը:

1. Էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտները հաշվետվությունները հանձնաժողով են ներկայացնում հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում և հաստատված ձևերին համապատասխան:
2. Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունները նախնական փաստաթղթային ստուգում են անցնում ֆինանսատնտեսական վերլուծության վարչության կողմից և համապատասխանության դեպքում «Փաստաթղթային ստուգում անցած է» նշումով, վարչության պետի (տեղակալի) ստորագրությամբ, տնտեսավարող սուբյեկտների կողմից հանձնվում են հանձնաժողովի գործերի կառավարչություն:

3. Նախնական փաստաթղթային ստուգման արդյունքում սահմանված ձևերին անհամապատասխանություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ համատեղ կազմվում է տեղեկանք՝ նշելով թերությունները և ճշտված հաշվետվությունների ներկայացման նոր ժամկետները:
4. Գործերի կառավարչությունում մուտքագրումից և հանձնաժողովի նախագահի համապատասխան հանձնարարականից հետո հաշվետվությունները մագնիսական սկավառակների հետ մեկտեղ հանձնվում են ֆինանսատնտեսական վերլուծության վարչություն ու գրանցվում մտից-ելից փաստաթղթերի գրանցամատյանում:
5. Սույն կարգի 3-րդ կետում նշված թերությունների բացակայության դեպքում հաշվետվությունները դրոշմվում են ֆինանսատնտեսական վերլուծության վարչության պետի (տեղակալի) կողմից և համարվում ընդունված՝ համապատասխան նշում կատարելով հաշվետվությունների գրանցամատյանում:
6. Հաշվետվությունների ընդունման օրվանից, հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում, ֆինանսատնտեսական վերլուծության վարչությունը հանձնաժողովի այլ ստորաբաժանումների հետ համատեղ կազմակերպում է քննարկումներ և իրականացնում վերլուծական աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով նաև անկախ փորձագետների:
7. Հաշվետվությունների քննարկման և վերլուծության ընթացքում հանձնաժողովը կարող է տնտեսավարող սուբյեկտներից պահանջել նաև վերլուծության աշխատանքների լիարժեք իրականացմանը նպաստող լրացուցիչ տեղեկություններ :

8. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքին և սույն կարգին համապատասխան ներկայացված հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը ստուգելու կամ պարզաբանումներ ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում, հանձնաժողովի նախագահի համապատասխան հրամանի համաձայն, հանձնաժողովի ներկայացուցիչները կարող են լինել տեղերում:
9. Սույն կարգի 8-րդ կետում նշված ստուգումները և պարզաբանումները հանձնաժողովի առաջարկությամբ կարող են իրականացնել նաև այլ իրավասու մարմիններ՝ հանձնաժողովի համապատասխան որոշման հիման վրա, օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. Ֆինանսատնտեսական վերլուծության վարչությունը հանձնաժողովի կողմից հաստատված ժամկետում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի հաշվետվության քննարկման և վերլուծության աշխատանքներն ավարտելուց հետո արդյունքները՝ վերլուծության եզրակացությամբ և առաջարկություններով, ներկայացնում է հանձնաժողով: